Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վերոնշյալ իրավական նորմերից հետևում է, որ յուրաքանչյուր գործով պետական տուրքի և գործի քննության հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման հարցի լուծումը պետք է կատարվի բավարարված հայցապահանջների չափին համապատասխան համամասնության սկզբունքի կիրառման միջոցով: Ընդ որում, գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Տվյալ դեպքում, հայցվորի կողմից Դատարան հայցադիմում ներկայացնելիս հայցադիմումին կից ներկայացվել է օրենքով սահմանված չափով վճարված պետական տուրքի անդորրագիրը, հետևաբար հայցը մերժելու պարագայում Դատարանը գտնում է, որ նախապես վճարված պետական տուրքի գումարի հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 234.12-րդ և 360-րդ, 362-363-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Խաչպար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը մերժել.

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**